

# ՀՀ Կոտայքի մարզ քաղաք Աբովյան

## Աբովյան համայնքի 2006թ. բյուջե

*Ըստ աշխատանքի արդյունքների*

Աբովյանի քաղաքապետ

Կ. Իսրայելյան

Աբովյանի քաղաքապետարանի  
ֆինանսատնտեսագիտական  
բաժնի պետ

Ժ. Սարգսյան

Տեղական ինքնակառավարման մարմինները դեռևս գտնվում են կայացման և ինքնահաստատման փուլում: Առայժմ հիմնախնդիր է համարվում տեղական ինքնակառավարման արդյունավետության և ծառայությունների մատուցման որակի բարձրացումը: Այս առումով անհրաժեշտություն է զգացվում լուրջ բարեփոխումներ իրականացնել այս բնագավառում՝ հաշվի առնելով արտասահմանյան երկրների առաջավոր փորձը:

Բարեփոխումները ենթադրում են բազմաթիվ գործողությունների իրականացում, այդ թվում՝ առավել արդիական, կատարելագործված և ներկա պահանջներին բավարարող բյուջետավարման մեթոդների կիրառում: Այդպիսի մեթոդներից է ըստ աշխատանքների կատարման բյուջետավարումը, որի իրականացմանը աջակցում է Միավորված Ազգերի Կազմակերպության Ջարգացման Ծրագիրը և Համայնքների Ֆինանսիստների Միավորումը:

Ըստ աշխատանքների կատարման բյուջետավարման կիրառումը զգալիորեն բարձրացնում է տեղական ինքնակառավարման արդյունավետությունն ու ծառայությունների մատուցման որակը: Դրա ներդրման անհրաժեշտությունն ու կարևորությունը պայմանավորված է հիմնականում հետևյալով.

- Ծախսային բյուջետավարումը իրականացվում է համայնքի ֆինանսական ստորաբաժանման կողմից, որը, մի կողմից չափից ավելի ծանրաբեռնում է այդ ստորաբաժանմանը, և մյուս կողմից, փոքրանում է այլ ստորաբաժանումների ծանրաբեռնվածությունը և պատասխանատվությունը: Ըստ աշխատանքների կատարման բյուջետավարման դեպքում պարտականությունները և պատասխանատվությունը բաշխվում են գրեթե հավասարաչափ համայնքի բոլոր ստորաբաժանումների միջև
  - Ծախսային բյուջետավարման դեպքում բյուջեից հասկացողների թիվը շատ սահմանափակ է, բյուջեն չի արտացոլում հիմնավորված հաշվարկներ, իսկ աշխատանքների կատարման բյուջեն ավելի պարզ ու հասկանալի է շատերի համար և լիովին հիմնավորված է
  - Ըստ աշխատանքների կատարման բյուջետավարման դեպքում մեծանում է բյուջետավարման գործընթացին բնակչության մասնակցության հնարավորությունը
  - Ըստ աշխատանքների կատարման բյուջետավարման դեպքում մեծանում է բյուջետավարման հրապարակայնության ու թափանցիկության հնարավորությունը, քանի որ հստակորեն նշվում են բոլոր խնդիրների ու գործողությունների կատարման ծախսերը
  - Ըստ աշխատանքների կատարման բյուջետավարումը համայնքի բնակչությանն ավելի լավ տեղեկատվություն է ապահովում մատուցվող ծառայությունների որակի ու մակարդակի մասին
  - Ըստ աշխատանքների կատարման բյուջետավարումը թույլ է տալիս ավելի լավ գնահատել ծրագրի արդյունքները
- Ծախսային բյուջեն ըստ աշխատանքների կատարման բյուջեի վերափոխման ընթացքում ծախսային բյուջետավարման որոշակի գործառնություններ շարունակում են մնալ որպես նոր բյուջետավարման մեթոդի բաղադրիչներ, որոնք համալրվում են ըստ աշխատանքների կատարման բյուջեին յուրահատուկ և անհրաժեշտ գործողություններով:

Աբովյան քաղաքի համայնքային բյուջեն **ըստ աշխատանքների արդյունքների արտահայտման** ձևաչափի մշակման աշխատանքներին ակտիվորեն մասնակցել են Աբովյան համայնքի ղեկավարի աշխատակազմը, մասնավորապես փոխքաղաքապետ Ա. Մուրադյանը և ֆինանսական բաժնի աշխատակիցներ Ա. Չոբանյանը և Բ. Արաբյանը:



Սույն ձեռնարկը պատրաստվել է Միավորված ազգերի զարգացման ծրագրի «Ըստ աշխատանքների կատարման բյուջետավարում» նախաձեռնության շրջանակներում:

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ բյուջետային համակարգը և այն կարգավորող օրենսդրությունը դեռևս վերափոխումների ու կայացման փուլում են ու լուծման կարոտ մեծաթիվ խնդիրներ ունեն : Այս ամենը իր անմիջական ազդեցությունն ունի համայնքային բյուջեի վրա : Կարևորելով ծանր կացության մեջ գտնվող բնակչությանը օգնելու առաջնահերթությունը , համայնքի 2006 թվականի բյուջեն ևս ընդգծված սոցիալական ուղղվածություն կունենա : Քաղաքապետարանը իր լիազորությունների շրջանակում բնակչությանը հնարավոր առավել ծառայությունների մատուցելու նպատակով ձգտել է օրենքի սահմաններում առավելագույն միջոցներ ընդգրկել համայնքային եկամտային մասում և դրանք ուղղել ամենաանհրաժեշտ ոլորտների պահպանմանն ու զարգացմանը : Պարտադիր լիազորությունների կատարման համար անհրաժեշտ միջոցներից զատ, համայնքային բյուջեում շոշափելի միջոցներ են նախատեսված համայնքային մի շարք հիմնախնդիրների լուծման համար՝ որպես կանավոր լիազորությունների ստանձնում : Սոցիալական տարաբնույթ խնդիրների շրջանակում սա մասնավորապես վերաբերվում է քաղաքի ջեռուցման վերականգնման ծրագրի կյանքի կոչմանը : Համայնքային բյուջեի առանցքը քաղաքում սոցիալական արդարության ապահովման հստակ նախադրյալներն են :

2006 թվականի համայնքային բյուջեն կազմելու ժամանակ համայնքը իր առջև դրել է հետևյալ նպատակները՝

- բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ բարձրացնելով եկամուտների հավաքագրման մակարդակը
- բարձրացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների որակը
- բարելավել կատարվելիք աշխատանքների և մատուցվող ծառայությունների ընդլայնումը ու որակը
- իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր
- իրականացնել քաղաքի բարեկարգման և կանաչապատման ընդգրկուն աշխատանքներ
- իրականացնել քաղաքի գազաֆիակացման և ջեռուցման վերականգնման ծրագիրը
- աշխուժացնել քաղաքի մշակութային կյանքը

2006 թվականի բյուջեն կազմելիս հիմք է հանդիսացել 2005 թվականի բյուջեի կատարման արդյունքները, որն ունի հետևյալ նկարագիրը՝

2005 թվականին համայնքի բյուջեի եկամուտները ծրագրով նախատեսված 444870.2 հազար դրամի դիմաց կազմել է 455782.5 հազար դրամ, արձանագրելով

տարեկան ծրագրային ցուցանիշի 2.5 % գերակատարում, որը կազմում է 10912.3 հազար դրամ : 2005 թվականի ընթացքում բյուջեի մուտքերը ունեցել են տատանողական վարքագիծ և նկատվում է դրանց մեղմացման միտում : Առավելագույն մուտքերը ապահովվել են մարտ, օգոստոս ամիսներին: Միջին ամսեկան եկամուտները կազմել են 19926.0 հազար դրամ (առանց պաշտոնական տրանսֆերտների ) : Հաշվետու տարում հավաքագրած եկամուտների 52.2 %-ը ապահովվել է սեփական եկամուտների հաշվին, իսկ 47.8 %-ը՝ պաշտոնական տրանսֆերտների (դոտացիա) հաշվին :

2005 թվականին համայնքի բյուջեի միջոցների հաշվին ծախսերի ֆինանսավորմանը հատկացվել է 470673.1 հազար դրամ՝ ապահովվելով տարեկան ծրագրի 91.5 %-ի կատարում :

Հաշվետու տարում ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը հատկացվել է 327864.1 հազար դրամ կամ այն կազմում է ամբողջ ծախսերի 70.0 %-ը :

Համայնքի բյուջեի պակասուրդի ( դեֆիցիտի) ֆինանսավորմանն է ուղղվել 69316.5 հազար դրամ :

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

### 1.1. Աշխարհագրական դիրքը, պատմական ակնարկ

Հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի անունը կրող քաղաքը սկսվել է կառուցվել 1963 թվականին: Աբովյան քաղաքի վարչական տարածքում է գտնվում մ.թ.ա. կառուցված հանրահայտ Էլար-Դարանի ամրոց -բնակատեղին և հնագույն պատմություն ունեցող նախկին Էլար գյուղը: Քաղաքը 1968 թվականի հունվարին Հայաստանի Գերագույն Խորհրդի Նախագահության հիմունքներով դասվել է շրջանային, իսկ 1970 թվականի օգոստոսին՝ հանրապետական ենթակայության քաղաքների շարքը: Աբովյան համայնքը գտնվում է Երևանից դեպի հյուսիս՝ 16 կմ հեռավորության վրա, Հրազդան և Ազատ գետերի միջև, Կոտայքի ընդարձակ սարահարթում: Քաղաքի հյուսիս արևելյան մասում բարձրանում է Գեղամա լեռնաշղթան, հյուսիսում՝ Հատիսն ու Գուբանասարը, արևմուտքում ձգվում է Հրազդանի կիրճը, իսկ հարավում՝ Նորքի բարձրունքը: Համայնքը մարզկենտրոնից գտնվում է 36 կմ հեռավորության վրա և բարձրությունը ծովի մակարդակից 1450 մ է: Տարվա եղանակները այստեղ խիստ են արտահայտված:

### 1.2. Ժողովրդագրություն.

Աբովյան համայնքի բնակչությունը 2001 թվականի մարդահամարի տվյալներով կազմում է 44.569 հազ.մարդ է, որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության մոտ 48%-ը, իսկ կանայք՝ 52%: Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

Հ/Հ	Ցուցանիշների անվանում	Չափի մ.	Քանակը	Հիմնախնդիրներ
1	կանայք	մարդ	23334	Մեծ է արտագնա աշխատանքների մեկնողների թիվը, գործազուրկների հիմնական մասը կանայք են, ցածր է
2	տղամարդիկ	մարդ	21235	
3	թոշակառուներ	մարդ	8000	
4	փախստականներ	մարդ	243	
5	միակողմանի ծնողազուրկ երեխաներ	մարդ	200	
6	երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	մարդ	5	

7	հայրենական պատերազմի մասնակիցներ	մարդ	117	միջին աշխատավարձը, մեծ է սոցիալապես անապահով ընտանիքների թիվը
8	հաշմանդամներ	մարդ	1000	
9	«Փարոս» համակարգում ընտ. նպաստ ստացողներ	ընտանիք	1100	
10	զոհված ազատամարտիկների ընտանիքներ	ընտանիք	118	
11	աշխատունակներ	մարդ	25860	
12	զբաղվածներ	մարդ	18900	
13	աշխատանք փնտրողներ	մարդ	1600	
14	գործազուրկներ	մարդ	990	
15	նպաստառու գործազուրկներ	մարդ	185	
16	ղարաբաղյան պատերազմի մասնակիցներ	մարդ	1700	
17	միայնակ մայրեր	մարդ	250	
18	նախադպրոցական և դպրոցական երեխաներ	մարդ	17200	

Համայնքի բնակչությունը ըստ տարիքային խմբերի.

	<i>Տարիքային խմբեր</i>	<i>Ընդամենը</i>	<i>Տղամարդիկ</i>	<i>Կանայք</i>
1	0-6	3778	1911	1867
2	7-16	8002	4035	3967
3	17-63	27865	13165	14700
4	63-ից ավելի	4924	2124	2800
5	Ընդհանուր բնակչությունը	44569	21235	23334

**1.3.Տեղական ինքնակառավարման մարմինները**

Արվյան համայնքի քաղաքապետն և ավագանին (բաղկացած 15 անդամից) ընտրվել են 2005թ. հոկտեմբերի 9-ին: Քաղաքապետի աշխատակազմը բաղկացած է 61 հաստիքից հետևյալ կառուցվածքով (տես հավելված 1)՝ քաղաքապետ, քաղաքապետի տեղակալ, գլխավոր խորհրդական, աշխատակազմի քարտուղար, օգնական, ֆինանսատնտեսագիտական բաժին (8), քաղաքաշինության բաժին (6), բնակարանային կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժին (4), առևտրի սպասարկումների կանոնակարգման բաժին (4), տրանսպորտի կանոնակարգման բաժին (1), իրավաբանական բաժին (2), կրթության, մշակույթի և երիտասարդական հարցերի բաժին (2), սոցիալական և սոցիալ-տնտեսական ծրագրերի բաժին (3), սպորտի, առողջապահության և էկոլոգիայի բաժին (2), տեղեկատվության և գործավարության բաժին (7), քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժին (2), վարչատնտեսական բաժին (15):

**1.4. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը**

Արվյան համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.97թ. թիվ 51 որոշմամբ և այլ իրավական ակտերով, որը բերված է հավելված 2-ում:

Վերջին տարիներին տնտեսական անկման հետևանքով համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացել է: Առավել վատ վիճակում են գտնվում կոմունալ համակարգերը: 2003 թվականից վերականգնվել է գազամատակարարումը բնակելի շենքերում:

Համայնքային նշանակության ճանապարհային ցանցի երկարությունը մոտ 51 կմ է, մակերեսը՝ 476.702 հազ.քմ: ճանապարհային ցանցի ընդլայնման և բարեկարգման կարիք կա:

**1.5.Բնության և շրջակա բնական միջավայրի պահպանություն**

Համայնքում գործում է խմելու ջրի ջրամատակարարման և կոյուղու կենտրոնացված համակարգ: Այս ծառայությունների սպասարկման անբավարար մակարդակը հետևանք է տնտեսական ճգնաժամի և ջրամատակարարման ցանցի մաշվածության: Ջրմուղի և

կոյուղու խողովակների մաշվածության պատճառով կեղտաջրերը կարող են թափանցել ջրամատակարարման համակարգ, հարուցելով աղիքային հիվանդություններ:

Խմելու ջրի մատակարարումը կատարվում է ընդհատումներով, ջրի օրական միջին ծախսը մեկ շնչի հաշվով վերջին տարիների ընթացքում անընդհատ նվազում է: Համայնքի բարձրահարկ շենքերում կենցաղային աղբը կուտակվում է այդ շենքերի մուտքերի աղբախցերում, իսկ մնացած շենքերի կենցաղային աղբը կուտակվում է համայնքի տարածքում հավասարաչափ տեղադրված 120 աղբարկղերի մեջ: Կուտակված աղբը ամեն օր սահմանված գրաֆիկով Աբովյանի համայնքային «Կոմունալ տնտեսություն» ՓԲԸ աղբատար ավտոմեքենաներով տեղափոխվում է համայնքի ծայրամասում գտնվող բացօթյա աղբավայր և վնասագերծվում:

Աղբահանությունը տարեկան կազմում է 6.240 հազ.տոննա, այդ թվում բնակչությունից՝ 6.180 հազ.տոննա: Մաքրման ենթակա ընդհանուր տարածքը 935.0 հազ. քմ է, այդ թվում 535.0 հազ.քմ՝ համայնքային նշանակության 19 փողոցներ և 400.0 հազ.քմ բակային և այլ տարածքներ: Սանմաքրման աշխատանքները կատարվում են ամեն օր, մեքենայացված և ձեռքի միջոցով:

Աբովյանի համայնքային «Կոմունալ տնտեսություն» ՓԲԸ-ում առկա մեքենայական պարկը կազմում է 14 միավոր մեքենա-մեխանիզմ, այդ թվում՝

6 (6) միավոր-մասնագիտացված հատուկ աղբատարներ

2(3) -//- - ինքնաթափ բեռնատար

1(1) -//- - ջրցան լվացող

4(4) -//- - տրակտոր

1(1) -//- - ասինիզացիոն մեքենա

Ամբողջ շարժակազմը ժամկետնանց է, գտնվում է բարոյապես և ֆիզիկապես մաշված վիճակում, կարիք է զգում թարմացման և վերանորոգման: Նորոգման կարիք է զգում նաև փողոցներում տեղադրված 120 աղբարկղներից մեծ մասը:

Համայնքի «Կոմունալ տնտեսություն» ՓԲԸ կողմից սպասարկվում է 167 հա կանաչ տարածք: Համայնքային նշանակության կանաչ տարածքներում առկա են բավականին մեծ թվով ծառեր և թփեր: Ոռոգման ջրագծերի ընդհանուր երկարությունը կազմում է 37 կմ: Այդ բնագավարում կանաչ տարածքների ընդլայնման և 6կմ ոռոգման ջրագծերի հիմնական վերանորոգման աշխատանքների պահանջ կա:

### 1.6.Բնակարանային տնտեսություն

Աբովյան համայնքն ունի 256 բնակելի շենք, որոնցից 5 հանրակացարանային շենքեր վթարային են, այդ թվում 2-ը՝ 4-րդ կարգի, 3-ը՝ 3-րդ կարգի: Վաղուց հասունացել է վթարային շենքերի գնահատման, ամրացման, վերանորոգման կամ քանդման աշխատանքները սկսելու անհրաժեշտությունը: 4-րդ կարգի վթարային շենքերի ամրացումը և վերանորոգումը հրատապ լուծում են պահանջում:

Աբովյանի 256 բնակելի շենքերից 220-ը սպասարկվում է համատիրությունների, իսկ 36-ը՝ «Աբովյանի քաղաքային տնտեսություն» ՓԲԸ-ի կողմից: Համայնքի 256 բնակելի շենքերից 88-ը 4- 5 հարկանի են ,168-ը բարձրահարկ են (9-16 հարկանի):

Աբովյանի բնակֆոնդի ընդհանուր մակերեսը 750 հազ.քմ է: Բնակարանների մոտ 99%-ը սեփականաշնորհված է, մոտ 1%-ը՝ առայժմ համայնքային սեփականություն է:

Համատիրությունների գործունեության կազմակերպումը հատկապես դժվար է ընթանում վթարային շենքերում, որտեղ պահանջվում են մեծ սկզբնական ծախսեր, որն էլ պատճառ է հանդիսանում բնակչությանը խուսափելու կազմակերպչի դերը ստանձնելուց: Փորձը ցույց է տալիս, որ գործող համատիրություններում շենքերի ֆիզիկական վիճակը հիմնականում չի բարելավել, քանի որ բնակչությունից զանձվող սպասարկման վարձը բավականացնում է միայն համատիրության ադմինիստրացիայի աշխատավարձին: Այս ամենը ի վերջո հանգեցնում է բնակչության արդարացի դժգոհությանը:

Համայնքի 168 բարձրահարկ շենքերում կան 290 վերելակներ, որոնցից 40-ը չեն աշխատում և ենթակա են ընթացիկ վերանորոգման:



Համայնքի տարածքում հաշվառված են օրինական և ինքնական կառուցված ավտոտնակներ:

Քաղաքում առկա են բնակարանների և բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքներ, որոնց մի մասը կազմում է զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների ընտանիքները:

Բնակֆոնդի շահագործումն ու պահպանումը, համայնքի ներկայիս ֆինանսական սուղ պայմաններում, լուրջ խնդիր է հանդիսանում, գոնե մասնակիորեն այն լուծելու համար: Համայնքի բնակելի շենքերի շահագործումը, բակային տարածքների բարեկարգումը անմիջականորեն կապված են բնակչության բնակսպասարկման վարձավճարների հավաքագրման մակարդակի հետ, համայնքում այն կազմում է 30-35 %:

### 1.7. Կրթություն, մշակույթ և սպորտ

Համայնքի նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկները հիմնականում ապահոված են մասնագիտական կադրերով, որոնց շնորհիվ հաջողվել է պահպանել այդ հիմնարկների աշխատանքային ռիթմը:

Մանկապարտեզները ապահովված են տիպային շենքերով, ջրով, էլեկտրաէներգիայով, պարբերաբար կատարվում է աղբահանություն, բացակայում է ջերմամատակարարումը, շենքերն ունեն վերանորոգման անհրաժեշտություն:

Համայնքի ՄՊՍԿ-ում գործում են հիմնականում տեխնիկական խմբեր: Զգացվում է հիմնականում վերանորոգման, ջերմամատակարարման և գույքի ձեռք բերման խիստ կարիք:

Երաժշտական դպրոցը գործում է առանձին մասնաշենքում՝ բավարար պայմաններով: Գործում են դաշնամուրի, լարային, փողային, ժողգործիքների և վոկալ բաժիններ:

Համայնքի գեղարվեստի դպրոցում դասավարդվում է գեղանկարչության, քանդակագործության, կերամիկա (խեցի), փայտի փորագրության, գորգերելեն և համակարգչային դիզայն առարկաներ:

Համայնքի Մշակույթի կենտրոնում գործում են պարի և դաշնամուրի խմբեր:

Համայնքի գրադարանային կենտրոնացված համակարգը տեղավորված է հարմարեցված շենքում:

Սարգսդպրոցում գործում են ձյուդոյի, սամբոյի, ազատ ըմբշամարտի, թեկվանդոյի, բռնցքամարտի, բասկետբոլի, մարմնամարզության, լողի, ջրացատքի և ծանրամարտի սպորտաձևերը:

Հ/Հ	Ցուցանիշների անվանում	Չափի մ.	Քանակը
1	նախադպրոցական հիմնարկներ	հատ	9
	աշխատակիցների թիվը	մարդ	197
	խմբեի թիվը	հատ	42
	հաճախող երեխաների թիվը	մարդ	795
2	արտադպրոցական հիմնարկների թիվը	հատ	4
	այդ թվում՝		
2.1	Երաժշտական դպրոց	հատ	1
	աշխատողների թիվը	մարդ	83
	երեխաների թիվը	մարդ	404
2.2	Գեղարվեստի դպրոց	հատ	1
	աշխատողների թիվը	մարդ	15
	երեխաների թիվը	մարդ	130
2.3	ՄՊՍԿ	հատ	1
	աշխատողների թիվը	մարդ	16
	խմբերի թիվը	հատ	8

	աշակերտների թիվը	մարդ	124
2.4	Մշակույթի կենտրոն	հատ	1
	աշխատողների թիվը	մարդ	17
	երեխաների թիվը	մարդ	80
3	Համայնքային գրադարան	հատ	4
	աշխատողների թիվը	մարդ	18
	գրքային ֆոնդ	գիրք	146397
4	միջնակարգ դպրոցներ	հատ	10
	աշխատողների թիվը	մարդ	510
	աշակերտների թիվը	մարդ	7278
5	Գիշերօթիկ կրթահամալիր	հատ	1
6	մարզադպրոց	հատ	1
	աշխատողների թիվը	մարդ	38
	երեխաների թիվը	մարդ	340

**1.8. Համայնքի սոցիալ-մշակութային և առողջապահական հիմնարկ կազմակերպություններ**

Համայնքի տարածքում գործում են 180 մահճ.տեղով հիվանդանոցը 182 աշխատողներով, 120 մահճ. տեղով ծծնդատունը 152 աշխատողներով, պոլիկլինիկական 236 աշխատողներով, ատամնաբուժարանը 25 աշխատողներով, 500 մահճ.տեղով հանրապետական կլինիկական տուբերկուլյոզային հիվանդանոցը, 10 հանրակրթական դպրոցներ՝ 7265 աշակերտով, գիտությունների ազգային ակադեմիայի մանրէկենսաբանության ինստիտուտը, 2 քոլեջներ, մասնավոր հիմունքներով 1 ԲՈՒՀ, «Հայ-ռուս ժողովուրդների բարեկամության» թանգարանը, «Կոտայք» քաղաքային մարզադաշտը, արդյունաբերական, շինարարական, տրանսպորտային, գյուղատնտեսական ձեռնարկություններ, 1 կապի հանգույց, հավասարաչափ բաշխված առևտրի և սպասարկումների 570 փոքր և միջին օբյեկտներ:

**1.9. Համայնքի արտադրական ձեռնարկություններ**

Արվյանում գրանցված են 717 տնտեսավարող սուբյեկտներ, որից 102 արտադրական կոոպերատիվներ, 35 դուստր ձեռնարկություններ, 310 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, 37 փակ բաժնետիրական ընկերություններ, 223 անհատական ձեռնարկություններ, 3 ընտանեական ձեռնարկություններ, 7 լիակատար տնտեսական ձեռնարկություններ: Վերջին 10 տարիների ընթացքում համայնքի արդյունաբերությունը անկում է ապրել, ընդլայնվել է առևտրային գործունեությունը:

**1.10. Առևտուր և սպասարկումներ**

Համայնքի տարածքում գործում են առևտրի և սպասարկումների 570 փոքր և միջին օբյեկտներ, այդ թվում 485 առևտրի մանր կրպակներ, 26 բենզինի լիցքավորման կետեր, 2 գազի լիցքավորման կետեր: Հիմնականում կարգավորված են այդ օբյեկտների տեղաբաշխման և արտաքին համաչափության հարցերը, պարբերաբար ստուգումներ են կատարվում տեղի թույլտվությունը, բյուջե կատարած մուծումները և կրպակների չափերի համապատասխանությունը նախագծին համապատասխանեցնելու նպատակով: Ներկայումս համայնքի բյուջեի սեփական եկամուտների զգալի մասը գոյանում է առևտրի և սպասարկումների օբյեկտներից գանձվող տեղական տուրքերից և նրանց զբաղեցրած հողի վարձավճարներից:

**1.11. Համայնքի ուժեղ կողմերը**

- Համայնքի աշխարհագրական դիրքը բարենպաստ է հեռանկարային զարգացման համար
- Համայնքն ունի գիտաարտադրական մեծ ներուժ
- Համայնքն ունի ոչ գյուղատնտեսական նշանակության հողեր, որոնք կարող են հատկացվել բնակչությանը տնաշինական և արդյունաբերական գործունեություն ծավալելու նպատակներով
- Համայնքում գործում է երկաթուղային կայարանը
- Համայնքը մոտ է գտնվում մայրաքաղաքին
- Համայնքի բնակլիմայական պայմանները բարենպաստ են

### 1.12. Համայնքի թույլ կողմերը

- Համայնքում առկա են վթարային բնակելի շենքեր
- Վերջին 10 տարիներին համայնքում բնակարանային շինարարության բնագավառում պետական միջոցներ ընդհանրապես չեն հատկացվել, իսկ համայնքում առկա են կիսակառույց բնակելի շենքեր
- Ֆիզիկապես մաշված վիճակում են գտնվում համայնքի կոմունալ համակարգերը (ջրամատակարարման և ջրահեռացման, ջեռուցման, ոռոգման) ցանցերը
- Կապիտալ վերանորոգման և բարեկարգման կարիք են զգում համայնքի կրթության և մշակույթի շենքերն ու շինությունները, բակային տարածքները
- Թույլ է քաղաքապետարանի ենթակա կառույցների նյութատեխնիկական բազան, դրանց հզորացումը պահանջում է ֆինանսական խոշոր միջոցների ներդրում
- Ընդհանուր տնտեսական ճգնաժամի պատճառով համայնքում մեծ է գործազուրկների թիվը, առկա է նաև թաքնված գործազրկության խնդիրը
- Համայնքում մեծ թիվ են կազմում սոցիալապես անապահով ընտանիքները, միայնակ թոշակառուները, ցածր եկամուտ ունեցողները
- Դեռևս վերջնական լուծում չեն ստացել փախստականների բնակարանային, աշխատանքային և սոցիալական ապահովության հիմնահարցերը

### 1.13. Համայնքի հնարավորությունները

- Համայնքում նկատվում է ֆինանսական կայունություն, մարվել են նախորդ տարիներին գոյացած համայնքային պարտքերը
- ՏԻ հնարավորություն է տալիս մշակել համայնքի զարգացման հեռանկարային ծրագրեր և հասնել ֆինանսական անկախության
- ՏԻ գործող համակարգը թույլ է տալիս անընդհատ վերանայել ու կատարելագործել համայնքի ղեկավարի աշխատակազմի և նրա ենթակայության կազմակերպությունների կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, կադրերի ընտրությունը
- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ նոր օրենքի ընդունմամբ ընդլայնվել են ՏԻՄ-երի լիազորությունները, գործառույթները ըստ բնագավառների և համայնքի բյուջեի եկամուտների հավաքագրման մակարդակը
- Համայնքի ղեկավարը և նորընտիր ավագանին վայելում են բնակչության մեծամասնության վստահությունը

### 1.14. Համայնքին սպառնազոդ վտանգները

- Համայնքում գործազուրկների բարձր տոկոսը
- Համայնքի տարածքում մեծ թվով ձեռնարկությունների չգործելը դժվարություններ են առաջացնում համայնքային բյուջե մուտքագրվող հողի հարկի և գույքահարկի գանձման գործում
- Բնակֆոնդի պահպանման համար կապիտալ ներդրումների պակասը

- Ցածր է համայնքի տարածքում գործող համատիրությունների գործունեության արդյունավետությունը, այս համակարգը «Համատիրությունների մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումից հետո զգալի բարեփոխումների կարիք է զգում, հակառակ դեպքում վտանգվում է համայնքի բնակֆոնդի պահպանումը և շահագործումը
- Բնակչության անվճարունակությունը:

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

### 2.1. Ռազմավարություն

Հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, քաղաքը դարձնել մաքուր, բարեկեցիկ և մրցունակ ներդրումների համար:

Համայնքի 2006-08թթ. հիմնական նպատակներն են՝

- կազմել համայնքի գլխավոր հատակագիծը, գոտիավորման քարտեզը և հողօգտագործման սխեման
- ապահովել համայնքի բնակելի շենքերի պահպանումը, շահագործումը և նորոգումը, աջակցելով համայնքի տարածքում գործող համատիրություններին
- ապահովել խոշոր կապիտալ ներդրումներ համայնքի բնակարանային-կոմունալ տնտեսության, ճանապարհային տնտեսության, հանգստի և բակային տարածքների բարեկարգման բնագավառներում
- ապահովել համայնքի կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների կազմակերպությունների անխափան և նպատակային գործունեությունը, իրականացնել այդ կազմակերպությունների զբաղեցրած շենքերում հիմնական վերանորոգման, ջերմամատակարարման վերականգնման և գույքի ձեռքբերման աշխատանքներ
- համայնքում պայմաններ ստեղծել զարգացնելու փոքր և միջին բիզնեսը, ստեղծելով նոր աշխատատեղեր մասնավոր սեկտորում
- միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների, փախստականների սոցիալական, բնակարանային, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման համար
- բարձրացնել համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը և որակը, բարելավելով համայնքի բյուջեի եկամուտների հավաքման աշխատանքները և նպատակային օգտագործելով բյուջեի միջոցները:
- ավելացնել բակային խաղահրապարակների քանակը
- ավարտին հասցնել բարձրահարկ շենքերի վերելակների վերականգնման աշխատանքները:

### ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Եկամուտների անվանում	2004թ. փաստ.	2005թ. նախա.	2006թ. կանխ.	2007թ. կանխ.	2008թ. կանխ.
Ընդամենը եկամուտներ	406502.2	434747.5	441044.8	490000.0	540000.0
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎԱՍՈՒՏՆԵՐ	89645	85000	85558.9	93000.0	100000.0
Հողի հարկ	7022.8	10300.0	10558.9	13000.0	15000.0
Գույքահարկ	82622.2	74700.0	75000.0	80000.0	85000.0

ՏՈՒՐՔԵՐ	29434.6	30900.0	35100.0	37000.0	40000.0
Պետական տուրքեր	22613.0	22700.0	25000.0	25000.0	25000.0
Տեղական տուրքեր	6821.6	8200.0	10100.0	12000.0	15000.0
ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	55549.2	66116.9	50760.5	50000.0	50000.0
Գույքի և հողի վարձակալությունից եկամուտներ	21593.0	24000.0	20000.0	20000.0	20000.0
Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ կողմից վարչական պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	11741.0	5579.1	10000.0	10000.0	10000.0
Տեղական վճարներ	2120.7	2100.0	2150.0	2500.0	2500.0
Այլ ոչ հարկային եկամուտներ	20094.5	34437.8	18610.5	17500.0	17500.0
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԿԱՊԻՏԱԼԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ	39778.1	35000.0	35000.0	50000.0	50000.0
Համայնքի սեփականություն համարվող հիմնական միջոցների օտարումից մուտքեր	39778.1	35000.0	35000.0	50000.0	50000.0
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	192095.3	217730.6	234625.4	260000.0	300000.0
Դոտացիա	169545.0	217730.6	234625.4	260000.0	300000.0
Սուբվենցիա	22550.3				

**3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՌԱՍՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

ՀՀ	Ցուցանիշներ	Չափի միավոր	2003թ. փաստ.	2004թ. փաստ.	2005թ. փաստ.	2006թ. կանխ.	2007թ. կանխ.	2008թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8	9
1	Համայնքի տարածքը	հա	600	600	600	600	600	600
2	Բնակչության թիվը	մարդ	44569	44569	44569	44600	44800	45000
3	Աշխատանքային ռեսուրսները	մարդ	26000	26000	26200	26200	26300	26400
	այդ թվում							
	գրադավաճները	մարդ	19900	19900	18900	20100	20200	20300
4	Գործազուրկների թիվը	մարդ	2130	2030	1830	1750	1700	1600
5	Ոռոգման ցանցի երկարությունը	կմ	31	33	36	39	42	44
6	Ոռոգման ջրի ծավալը	հազ. խմ	456.192	357.183	375.0	375.0	375.0	375.0
7	Կանաչ տարածք	հա	150	150	150	165	180	195
8	Մեկ բնակչին ընկն. կանաչ տարածքը	քմ	3.2	3.2	3.4	3.6	3.8	3.9
9	Համայնքի փողոցների երկարութ.	կմ	51	51	51	51	51	52
10	Ճանապարհային ցանցի մակերեսը	հազ. քմ	476.7	476.7	476.7	476.7	476.7	486.7
11	Սպառողներ կողմից իրացվող ջրի քանակը	մլն խմ	1.212	1.212	1.212	1.3	1.4	1.5

12	Ջրի կորուստները ցանցում	%	30	30	30	25	20	15
13	Առևտրի և սպասարկումների օբյեկտների թիվը	հատ	494	529	552	570	565	560
	այդ թվում՝ առևտրի օբյեկտներ	հատ	416	445	469	485	490	497
	ժ. 23-ից հետո աշխատող օբյեկտներ	հատ	47	58	65	70	75	80
	Բենզինի լիցքակայաններ	հատ	26	26	26	26	27	28
	Գազի լիցքավորման կետեր	հատ	2	2	2	1	2	2
14	Բնակելի շենքերի ընդհանուր թիվը	շենք	256	256	256	257	257	257
15	Ընդհանուր և բնակ. մակերեսները	հազ. քմ	832	832	832	835	835	835
	այդ թվում՝							
ա/	պետական բնակելի	հազ.քմ	8.8	8.8	6.5	6.0	5.0	4.0
բ/	սեփականաշնորհված բնակելի		823.2	823.2	825.5	825.2	826.2	827.2
16	համատիրություններում	շենք	241	241	241	241	241	241
17	«Քաղաքայն տնտեսություն»	շենք	29	29	35	25	15	10
18	վթարային IV կարգի շենքերում	շենք	2	2	2	2	2	2
19	Վերելակով շենքերի թիվը	շենք	152	152	152	152	152	152
20	Վերելակների ընդհանուր թիվը	հատ	292	292	292	292	292	292
21	Գործող վերելակների թիվը	հատ	159	159	250	275	285	292
22	Տեղափոխվող աղբի քանակը	հազ.տ	6.24	6.24	6.24	6.24	6.24	6.24
	այդ թվում՝ բնակչությունից	հազ.տ	6.18	6.18	6.18	6.18	6.18	6.18
23	Նախադպրոցական հիմնարկ. թիվը	հատ	10	10	9	9	8	8
	Խմբերի թիվը	խումբ	47	47	42	42	46	50
	Երեխաների թիվը	մարդ	770	770	795	795	890	900
24	Սովորողների թիվը ցերեկային հանրակրթական դպրոցներում	հազ. մարդ	8.052	7.431	7.073	7.073	7.1	7.2
25	Արտադպրոցական հիմն. թիվը	հատ	4	4	4	4	4	4
26	Արտադպր. հիմն. հաճախողների թիվը	մարդ	730	730	1738	1750	1770	1780
27	Հիվանդանոցների թիվը	հատ	2	2	2	2	2	2
28	Հիվանդանոցային մահճ.թիվը	հատ	680	680	680	680	680	680
29	Պոլիկլ.-ամբուլատ. թիվը	հատ	1	1	1	1	1	1
30	Ամբուլատ-պոլիկլ հիմն-ի հզորությունը	այց/ հերթ	400	400	350	350	350	350
31	Համայնքում մահացությունը	մարդ	720	725	730	730	725	720
32	Միջին ծնելիությունը	մարդ	600	700	700	710	720	730
33	Ծննդատների մահճակալների թիվը	հատ	120	120	120	120	120	120
34	Թոշակառուների թիվը	հազ մարդ	7.3	7.2	8.0	7.0	6.9	6.9
35	Փախստականների թիվը	մարդ	3200	2800	243	230	220	210
36	«Փարոս» համակարգից օգտվող. ընտան.թիվը	հազ. ընտ.	1.5	1.4	1.1	1.1	1.1	1.1

# 1.ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ

## ➤ Առաքելություն

Մատուցել համայնքի բնակիչներին համայնքի սեփականություն հանդիսացող օբյեկտների տեխնիկական վիճակի հետ կապված ծառայություններ /տանիքների, ջրագծերի, վերելակների վերանորոգում, բնակֆոնդի շենքերի սեյսմիկ միջոցառման մշակում, նախադպրոցական, արտադպրոցական, մշակույթի կենտրոնի և հանրակացարանային շենքերի վերանորոգում/, որը կավելացնի համայնքի բնակֆոնդի և այլ օբյեկտների երկարակետությունը:

## ➤ Գործառույթներ

Բնակարանային տնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1.Կազմում է համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի, շինությունների, քաղաքի բարեկարգման, կանաչապատման, ինժեներական կոմունիկացիաների և այլ օբյեկտների կապիտալ վերանորոգման աշխատանքների փաստաթղթեր, ինչպես նաև իրականացնում է քաղաքում կատարվող շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողություն

2.Կազմում և քաղաքապետի հաստատմանն է ներկայացնում համայնքի սոցիալ – տնտեսական զարգացման և օբյեկտների կապիտալ վերանորոգման աշխատանքների եռամյա ծրագրեր

3.Անհրաժեշտության դեպքում կազմակերպում է համայնքի բնակֆոնդի և այլ նշանակության շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի ուսումնասիրություն և տալիս համապատասխան եզրակացություն: Եզրակացություն է տալիս նաև քաղաքի տարածքում ինժեներական կառույցների և ստորգետնյա կոմունիկացիոն գծերի վերանորոգման աշխատանքների վերաբերյալ

4.Աջակցում է համատիրություններին, համակարգում և վերահսկում է նրանց աշխատանքների համապատասխանությունը «Համատիրության մասին» և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքներին

5.Իր կանոնադրության լիազորություններն իրականացնելու նպատակով համագործակցում է պետական և մարզային համապատասխան կառույցների հետ, քաղաքապետի հանձնարարությամբ իրականացնում է այլ լիազորություններ

## ➤ Ուղղակարական հիմնահարցեր

1.Հանրակացարանների վթարային վիճակ

2.Խաղահրապարակների և հանգստյան գոտիների ոչ պատշաճ վիճակ

3.Փողոցների և այլ ասֆալտապատ տարածքների վերականգնման անհրաժեշտություն

4.Բնակֆոնդի վերելակների և տանիքների ոչ բարվոք վիճակ

5.Համայնքի սեփականություն հանդիսացող օբյեկտների ջեռուցման համակարգերի բացակայություն

6.Համայնքի ոռոգման համակարգի վթարային և անբավարար վիճակ

7.Կանաչապատ տարածքների սակավություն

## ➤ Նպատակներ

1.Բարելավել և վերականգնել քաղաքի վթարային հանրակացարանները

2.Ընդլայնել և բարեկարգել համայնքի բոլոր զբոսայգիները, հանգստի գոտիները և խաղահրապարակները

3.Վերականգնել համայնքի փողոցները, մայթերը և այլ ասֆալտապատ տարածքները

4.Վերանորոգել համայնքի սեփականություն հանդիսացող վերելակները և տանիքները

5.Կառուցել ջեռուցման համակարգեր համայնքի սեփականություն հանդիսացող կազմակերպություններում

6.Վերականգնել և ընդլայնել համայնքի ոռոգման ցանցը

7. Ավարտին հասցնել 3-րդ և 4-րդ միկրոշրջանները վարչական կենտրոնին կապող աստիճանների կառուցման աշխատանքները

➤ **Երկարաժամկետ խնդիրներ**

1. Վերանորոգել փողոցների և բակերի՝ 20000 ք.մ. մակերեսը (3 տարի)
2. Վերանորոգել Ռոսիայի, Անդրանիկի փողոցների և քաղաքի մյուս հատվածների հենապատերի որոշակի հատվածը (400 ք.մ.) (1 տարի)
3. Ավարտել 3-րդ և 4-րդ միկրոշրջանները վարչական կենտրոնին կապող 600 գ.մ. երկարությամբ աստիճանների կառուցման աշխատանքները (1 տարի)
4. Բարեկամության հրապարակի հուշարձանների տարածքում կառուցել 400 ք.մ. մակերեսով դեկորատիվ ջրավազան (2 տարի)
5. Ավարտին հասցնել Հատիս փողոցի՝ մինչև ծննդատուն ընկած աջակողմյան 2500 ք.մ. մակերեսով մայթի և գազոնի վերականգնողական աշխատանքները (1 տարի)
6. Ավարտել 4-րդ միկրոշրջանի մանկական մարզական խաղահրապարակի շինարարական աշխատանքները (1 տարի)
7. Բարեկարգել Գեղարդի փողոցի թիվ 5 շենքին հարող 8000 ք.մ. տարածքը և կառուցել սպորտհրապարակ ու հանգստի գոտի (2 տարի)
8. Համաձայն թաղամասի բարեկարգման նախագծի՝ ավարտել 4-րդ միկրոշրջանի 0.7 կմ երկարությամբ 5-րդ փողոցի շինարարական աշխատանքները (1 տարի)
9. Կապիտալ վերանորոգել բնակելի շենքերի 5000 ք.մ. հարթ և 5000 ք.մ. ասբոթիթեյա տանիքները (3 տարի)
10. Կապիտալ վերանորոգել, կարգաբերել և գործարկել բնակելի շենքերի 40 վերելակներ (3 տարի)
11. Ուսումնասիրել 254 բնակելի շենքերի տեխնիկական վիճակը (1 տարի)
12. Նորոգել բնակելի շենքերի ջրամատակարարման ցանցի մի մասը՝ 500 գ. մ. (2 տարի)
13. Ավարտել Մշակույթի կենտրոնի ակունբային մասնաշենքի ներքին հարդարման աշխատանքները և վերականգնել ջեռուցման համակարգը (3 տարի)
14. Վերանորոգել թիվ 2; 3; 4; 5; 9; 10; 12 մուլտի-մանկապարտեզների տանիքները, սանհանգույցներում տեղադրված սարքերը և կատարել ներքին կոսմետիկ վերանորոգում (2 տարի)
15. Վերականգնել թիվ 3; 5; 6; 9 մուլտի-մանկապարտեզների և Գեղարվեստի դպրոցի ջեռուցման համակարգերը և կառուցել կաթսայատներ (2 տարի)
16. Մասնակի վերանորոգել Երաժշտական դպրոցի դահլիճային և ուսումնական մասնաշենքերի տանիքները (ընդամենը 1500 ք.մ.) (2 տարի)
17. Կապիտալ վերանորոգել Երաժշտական դպրոցի շենքը (4000 ք.մ.) (1 տարի)
18. Կապիտալ վերանորոգել Գրադարանի տանիքի 500 ք.մ. հատվածը (2 տարի)
19. Կապիտալ վերանորոգել Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի դահլիճը (800 ք.մ.) (2 տարի)
20. Վերանորոգել Քաղաքապետարանի վարչական շենքի 120 ք.մ. ցոկոլային մասերի երեսպատած զրանիտյա սալիկները (3 տարի)
21. Երեսպատել Քաղաքապետարանին հարակից մայթերը ցեմենտյա դեկորատիվ սալիկներով (1000 ք.մ.) (2 տարի)
22. Վերանորոգել Քաղաքապետարանի ջեռուցման համակարգը և կառուցել կաթսայատուն (2 տարի)
23. Պարսպապատել վարչական կենտրոնում գտնվող 1 հա մակերեսով ֆուտբոլի դաշտը (1 տարի)
24. Կապիտալ վերանորոգել «Մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՓԲԸ-ի 2 մասնաշենք (1 տարի)
25. Կապիտալ վերանորոգել Շախմատի դպրոցը (1000 ք.մ.) (1 տարի)
26. Կապիտալ վերանորոգել թվով 4 հանրակացարանների տանիքներ (3 տարի)



27. Իրականացնել թիվ 5; 9 վթարային հանրակացարանների՝ նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխան ուժեղացման ու վերականգնման աշխատանքներ (3 տարի)
28. Վերականգնել 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ միկրոշրջանների, կենտրոնական փողոցների, Սարալանջի և Էլար թաղամասի ոռոգման համակարգը (7000 գ.մ.) (3 տարի)
29. Վերանորոգել Օգոստոսի 23-ի փողոցի ջրահեռացման համակարգը (200 գ.մ.) (3 տարի)
30. Ապահովել «Կոմունալ տնտեսություն» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակը (3 տարի)
31. Տեղադրել, ամրացնել, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում բարձրացնել փողոցների մի մասի եզրաքարերը (3000 գ.մ.) (1 տարի)
32. Մասնակի վերանորոգել քաղաքի միջթաղամասային փողոցների և բարեկարգ տարածքների հենապատերը (200 ք.մ.) (1 տարի)
33. Վերանորոգել փողոցների լուսավորության ցանցերի որոշակի հատվածը՝ 2000 գ.մ. (1 տարի)
34. 50 հա կանաչապատ տարածքներում իրականացնել վնասատուների դեմ քիմիական պայքարի միջոցառումներ (1 տարի)
35. Իրականացնել 2000 գ.մ. ոռոգման խողովակաշարերի խցանումների բացման, վերականգնման միջոցառումներ (1 տարի)
36. Մաքրել, վերանորոգել թվով 40 դիտահորեր, տեղադրել կափարիչներ (1 տարի)
37. Ապահովել «Քաղաքային տնտեսություն» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակը (3 տարի)
38. Բոլոր մանկապարտեզներում (թվով 9) վերանորոգել ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը, փոխել կոտրված ապակիները (1 տարի)
39. Վերանորոգել Մշակույթի կենտրոնի, Գեղարվեստի դպրոցի, Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի, Երաժշտական դպրոցի, Քաղաքապետարանի վարչական շենքի և թվով 8 հանրակացարանների (ընդամենը 13 շինություն) ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը, փոխել կոտրված ապակիները (1 տարի)

➤ **Պատասխանատու**  
Բնակարանային տնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժնի պետ՝ Լ. Մանուկյան

## 2. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺԻՆ

### ➤ **Առաքելություն**

Համայնքի տարածքում պաշտպանելով սպառողների իրավունքները և շահերը՝ կանոնակարգել տրանսպորտի, առևտրի և սպասարկումների ոլորտները, որի արդյունքում կբարելավվի նշված ոլորտների ծառայությունների մատուցման արդյունավետությունը և որակը:

### ➤ **Գործառույթներ**

Տրանսպորտի, առևտրի և սպասարկումների կանոնակարգման բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1. Մշակում և քաղաքապետին է ներկայացնում առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտների գործունեության համայնքային կանոնները և ապահովում է դրանց կատարումը
2. Առևտրի համայնքային կանոններին համապատասխան նախապատրաստում և քաղաքապետի հաստատմանն է ներկայացնում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի, տոնավաճառներ կազմակերպելու, ինչպես նաև բացօթյա վաճառք կազմակերպելու, խաղատներին, բաղնիքներին, սաունաներին, զվարճանքի, շահումով

- խաղեր կազմակերպող օբյեկտներին ժամը 23<sup>00</sup> –ից հետո աշխատելու, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվությունները
- 3.Նախապատրաստում է հողի վարձակալության պայմանագրերը և ներկայացնում է քաղաքապետի հաստատմանը
- 4.Հսկողություն է սահմանում առևտրի և սպասարկման ոլորտներում օրենքով սահմանված տուրքերի և վճարների, պայմանագրային գումարների գանձման նկատմամբ
- 5.Քաղաքապետի հանձնարարությամբ քննարկում է քաղաքացիների դիմումներն ու գանգատները, պատասխանում դրանց, առաջարկում համապատասխան լուծումներ
- 6.Իր լիազորություններն իրականացնելու նպատակով համագործակցում է պետական և մարզային կառույցների հետ
- 7.Առաջարկություններ է ներկայացնում ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման տարեկան ծրագրում համայնքի մասնակցության մասին
- 8.Քաղաքապետի որոշումով և հանձնարարականով իրագործում է ՀՀ օրենսդրությամբ չհակասող այլ գործառնություններ

➤ **Ռազմավարական հիմնահարցեր**

- 1.Սասնավոր բիզնեսի սաղմնային վիճակ
- 2.Առևտրի և սպասարկումների ոլորտի՝ ժամանակի պահանջներին անհարիր վիճակ
- 3.Ներքաղաքային տրանսպորտային ցանցի՝ համայնքի տարածքի ոչ ամբողջական ընդգրկում

➤ **Նպատակներ**

- 1.Ստեղծել նպաստավոր պայմաններ մասնավոր բիզնեսի զարգացման համար
- 2.Նպաստել առևտրի և սպասարկումների հետագա զարգացմանը՝ հետզհետե այն բերելով ժամանակակից տեսքի
- 3.Ընդլայնել համայնքի տարածքում ներքաղաքային տրանսպորտային ցանցը, թարմացնել տրանսպորտային պարկը
- 4.Սահմանել մշտական հսկողություն ՀՀ օրենքների և տեղական ինքնակառավարման մարմնի որոշումների նկատմամբ՝ բնակչության սպասարկման մակարդակի բարձրացման համար
- 5.Բարձրացնել առևտրի և սպասարկումների օբյեկտների հաշվառման աշխատանքների օպերատիվությունը
- 6.Վերացնել փողոցային առևտուրը՝ կենտրոնացնելով այն երեք գյուղնթերքի շուկաներում և չորս տոնավաճառներում
- 7.ՆԳ բաժնի և հակահամաճարակային կայանի աշխատակիցների հետ համատեղ կազմակերպել ստուգայցեր՝ առանց համապատասխան թույլտվության անօրինական գործունեությունը արգելելու և առևտրի և սպասարկման օբյեկտներում սանիտարական նորմերն ապահովելու համար
- 8.Կազմակերպել ստուգումներ առևտրի համայնքային կանոնների պահպանման նպատակով
- 9.Ապահովել տարածքի վարձավճարների հավաքագրման, տեղական տույժերի գանձումների գծով աշխատանքների կատարումը

➤ **Երկարաժամկետ խնդիրներ**

- 40.Համայնքի տարածքից դուրս կազմակերպել հեղուկ գազի, շինանյութերի և կոշտ վառելիքի բացօթյա 2 վաճառատեղ (3 տարի)

➤ **Պատասխանատու**

Տրանսպորտի, առևտրի և սպասարկումների կանոնակարգման բաժնի պետ՝ Մ.Մովսիսյան

➤ **Առաքելություն**

Համայնքի բնակչությանը մատուցել ծառայություններ մշակութային, նախադպրոցական և արտադպրոցական կրթության ոլորտներում՝ համայնքի մշակութային կյանքն ակտիվացնելու, նախադպրոցական և արտադպրոցական որակյալ և ժամանակակից կրթություն ապահովելու համար:

➤ **Գործառույթներ**

Մշակույթի բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1. Կազմակերպում է համայնքային ենթակայության կրթական, մշակութային հիմնարկների, գրադարանների գործունեությունը, միջոցներ է ձեռնարկում դրանց նյութատեխնիկական բազայի ամրապնդման և նորոգման ուղղությամբ
2. Կազմակերպում է համայնքի տարածքում ՀՀ տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ
3. Աջակցում է ազգային արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը
4. Քաղաքապետի հանձնարարությամբ քննարկում է քաղաքացիների դիմումներն ու գանգատները, պատասխանում դրանց, անհրաժեշտության դեպքում առաջարկում համապատասխան լուծումներ
5. Իր լիազորություններն իրականացնելու նպատակով համագործակցում է պետական և մարզային համապատասխան կառույցների հետ
6. Իրականացնում է օրենսդրությանը չհակասող այլ գործառույթներ

➤ **Ռազմավարական հիմնահարցեր**

1. Մշակութային օջախներում, նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկներում ջեռուցման համակարգերի բացակայություն, տեխնիկական թերբեռնվածություն
2. Մշակութային օջախներում, նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկների շենքային անբավարար պայմաններ
3. Դրամատիկական և տիկնիկային թատրոնների, կամերային երգչախմբի և ժող. գործիքների համույթի բացակայություն

➤ **Նպատակներ**

1. Կազմակերպել նախադպրոցական, արտադպրոցական լիարժեք և որակյալ կրթություն
2. Աշխուժացնել մշակութային կյանքը
3. Բարձրացնել սննդի որակը
4. Ստեղծել դրամատիկական և տիկնիկային թատրոններ, կամերային երգչախումբ և ժող. գործիքների համույթ

➤ **Երկարաժամկետ խնդիրներ**

41. Ապահովել Համայնքային Գրադարանի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակը (3 տարի)
42. Ապահովել Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակը (3 տարի)
43. Ապահովել «Մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակը (3 տարի)
44. Ապահովել Գեղարվեստի դպրոցի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակը (3 տարի)
45. Ապահովել Երաժշտական դպրոցի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակը (3 տարի)
46. Ապահովել Մշակույթի կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակը (3 տարի)

- 47.Ապահովել թիվ 2 մսուր-մանկապարտեզի կողմից 5 խումբ երեխաների սպասարկման ընթացիկ մակարդակը (3 տարի)
- 48.Ապահովել թիվ 3 մսուր-մանկապարտեզի կողմից 6 խումբ երեխաների սպասարկման ընթացիկ մակարդակը (3 տարի)
- 49.Ապահովել թիվ 4 մսուր-մանկապարտեզի կողմից 4 խումբ երեխաների սպասարկման ընթացիկ մակարդակը (3 տարի)
- 50.Ապահովել թիվ 5 մսուր-մանկապարտեզի կողմից 4 խումբ երեխաների սպասարկման ընթացիկ մակարդակը (3 տարի)
- 51.Ապահովել թիվ 6 մսուր-մանկապարտեզի կողմից 4 խումբ երեխաների սպասարկման ընթացիկ մակարդակը (3 տարի)
- 52.Ապահովել թիվ 7 մսուր-մանկապարտեզի կողմից 4 խումբ երեխաների սպասարկման ընթացիկ մակարդակը (3 տարի)
- 53.Ապահովել թիվ 9 մսուր-մանկապարտեզի կողմից 7 խումբ երեխաների սպասարկման ընթացիկ մակարդակը (3 տարի)
- 54.Ապահովել թիվ 10 մսուր-մանկապարտեզի կողմից 4 խումբ երեխաների սպասարկման ընթացիկ մակարդակը (3 տարի)
- 55.Ապահովել թիվ 12 մսուր-մանկապարտեզի կողմից 4 խումբ երեխաների սպասարկման ընթացիկ մակարդակը (3 տարի)
- 56.Ապահովել թիվ 2 մսուր-մանկապարտեզի գործունեության անընդհատությունը՝ տարվա ընթացքում երկարացնելով գործունեությունը 3 ամսով (1 տարի)
- 57.Ապահովել թիվ 3 մսուր-մանկապարտեզի գործունեության անընդհատությունը՝ տարվա ընթացքում երկարացնելով գործունեությունը 3 ամսով (1 տարի)
- 58.Ապահովել թիվ 4 մսուր-մանկապարտեզի գործունեության անընդհատությունը՝ տարվա ընթացքում երկարացնելով գործունեությունը 3 ամսով (1 տարի)
- 59.Ապահովել թիվ 5 մսուր-մանկապարտեզի գործունեության անընդհատությունը՝ տարվա ընթացքում երկարացնելով գործունեությունը 3 ամսով (1 տարի)
- 60.Ապահովել թիվ 6 մսուր-մանկապարտեզի գործունեության անընդհատությունը՝ տարվա ընթացքում երկարացնելով գործունեությունը 3 ամսով (1 տարի)
- 61.Ապահովել թիվ 7 մսուր-մանկապարտեզի գործունեության անընդհատությունը՝ տարվա ընթացքում երկարացնելով գործունեությունը 3 ամսով (1 տարի)
- 62.Ապահովել թիվ 9 մսուր-մանկապարտեզի գործունեության անընդհատությունը՝ տարվա ընթացքում երկարացնելով գործունեությունը 3 ամսով (1 տարի)
- 63.Ապահովել թիվ 10 մսուր-մանկապարտեզի գործունեության անընդհատությունը՝ տարվա ընթացքում երկարացնելով գործունեությունը 3 ամսով (1 տարի)
- 64.Ապահովել թիվ 12 մսուր-մանկապարտեզի գործունեության անընդհատությունը՝ տարվա ընթացքում երկարացնելով գործունեությունը 3 ամսով (1 տարի)

➤ **Պատասխանատու**  
 Կրթության, մշակույթի և երիտասարդական հարցերի բաժնի պետ՝ Կ.Կիրակոսյան

#### **4.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ**

➤ **Առաքելություն**

Կազմել համայնքի զարգացման ծրագրեր՝ ներգրավելով համայնքի բնակչությանը այդ գործընթացում, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով սոցիալապես անապահով խմբերին, որոնք հնարավորություն կտան քաղաքապետարանի աշխատանքները դարձնել հրապարակային և թափանցիկ, կապահովեն համայնքի համալիր և արդյունավետ զարգացումը, կբարելավեն բնակչության անապահով խմբերի սոցիալական վիճակը:

➤ **Գործառույթներ**

Սոցիալական ծրագրերի, տեղեկատվության և գործավարության բաժինն իրականացնում է հետևյալ գործառնությունները.

1. Համագործակցում է պետական և տեղական հիմնադրամների հետ
2. Իրականացնում է տեղական նշանակության սոցիալական ծրագրեր
3. Հնարավորության սահմաններում օժանդակում է քաղաքացիների սոցիալական խնդիրների լուծմանը
4. Հաստատված կարգով իրականացնում է սոցիալապես անապահով բնակարիքավորների հաշվառում և քաղաքապետին է ներկայացնում առաջարկություններ նրանց վարձակալական հիմունքներով բնակտարածություն հատկացնելու վերաբերյալ
5. Համագործակցում է քաղաքի բնակչության սոցիալական և զբաղվածության հարցերով զբաղվող պետական և մարզային համապատասխան կառույցների և նրանց ստորաբաժանումների հետ
6. Քաղաքապետի հանձնարարությամբ քննարկում է քաղաքացիների դիմումներն ու գանգատները, պատասխանում դրանց, անհրաժեշտության դեպքում առաջարկում համապատասխան լուծումներ
7. Իրականացնում է օրենսդրությանը չհակասող այլ գործառնություններ

➤ **Ռազմավարական հիմնահարցեր**

1. Համայնքի վերաբերյալ տեղեկությունների ճշգրտության և ամբողջականության ցածր մակարդակ
2. Հրապարակայնության ապահովման խոչընդոտների առկայություն

➤ **Նպատակներ**

1. Ընդլայնել համագործակցությունը հիմնադրամների հետ
2. Նպաստել հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալական պայմանների բարելավմանը
3. Ապահովել ՏԻՄ որոշումների և կարգադրությունների մատչելիությունը բնակչությանը
4. Կազմակերպել հանդիպումներ հիմնադրամների հետ

➤ **Երկարաժամկետ խնդիրներ**

65. Բարձրացնել համայնքի բնակչությանը տեղեկատվության հասանելիության աստիճանը 50 %-ով (3 տարի)
66. Մեղմել սոցիալապես անապահով 1000 ընտանիքի սոցիալական ծանր վիճակը՝ տարեկան տրամադրելով 5000 դրամի չափով նպաստներ (3 տարի)

➤ **Պատասխանատու**

Սոցիալական ծրագրերի, տեղեկատվության և գործավարության բաժնի պետ՝ Ա. Զաքարյան

## 5. ԲԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

➤ **Առաքելություն**

Կազմակերպել քաղաքի կառուցման և պահպանման աշխատանքները քաղաքաշինության նորմերի դրույթներին համաձայն՝ ստեղծելով համայնքի կենսագործունեության համար բարենպաստ և ակնհաճ միջավայր:

➤ **Գործառնություններ**

Քաղաքաշինության բաժինն իրականացնում է հետևյալ գործառնությունները.  
1. Կառավարության սահմանած կարգով կազմում է քաղաքի գլխավոր հատակագիծը, հողերի գոտիավորման ու օգտագործման սխեմաները, գոտիավորման այլ փաստաթղթերը

2. Աջակցում է անշարժ գույքի կադաստրի վարմանը, կազմում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը և ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը
3. Քաղաքի գլխավոր հատակագծին և հողօգտագործման սխեմային համապատասխան կազմակերպում և քաղաքապետին առաջարկություններ է ներկայացնում համայնքի տարածքում գտնվող հողերի հատկացման, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու հետ կապված հարցերի վերաբերյալ
4. Կազմում է սոցիալական նշանակության և այլ օբյեկտների կառուցման նախագծման ճարտարապետա-հատակագծային առաջադրանքները, նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
5. Քաղաքապետին ներկայացնում է առաջարկություններ տների, շենքերի և այլ շինությունների համարակալման մասին
6. Քաղաքի տարածքում ապահովում է քաղաքաշինական գործունեության վերահսկողությունը, միջոցներ է ձեռնարկում ապօրինի շինարարությունները կանխելու և դադարեցնելու ուղղությամբ
7. Քաղաքապետի հանձնարարությամբ քննարկում է քաղաքացիների դիմումներն ու գանգատները, պատասխանում դրանց, անհրաժեշտության դեպքում առաջարկում համապատասխան լուծումներ
8. Իր լիազորություններն իրականացնելու նպատակով համագործակցում է պետական և մարզային համապատասխան կառույցների հետ
9. Իրականացնում է օրենսդրությանը չհակասող այլ գործառույթներ

➤ **Ռազմավարական հիմնահարցեր**

1. Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթի՝ քաղաքի գլխավոր հատակագծի բացակայություն
2. Գեոդեզիական կետերի և սահմանամիջերի վերականգնման և պահպանման անհրաժեշտություն
3. Քաղաքի կառուցման և պահպանման աշխատանքների՝ քաղաքաշինական նորմերի դրույթներին անհամապատասխանություն

➤ **Նպատակներ**

1. Կանխել և վերացնել անօրինական շինություններն ու հողազավթումները, ինչպես նաև հաստատված նախագծերից և առաջադրանքներից հնարավոր շեղումները, վերահսկել շենքերի, շինությունների նպատակային օգտագործումը
2. Հնարավորինս ապահովել հասարակության իրազեկությունը նախատեսվող կառուցապատման աշխատանքներին
3. Ապահովել քաղաքացիների դիմումների, նամակների հայտերի և ներկայացված նախագծերի օպերատիվ քննարկումը և ներկայացումը քաղաքապետին
4. Կազմել քաղաքի հողային հաշվեկշիռը
5. Ապահովել համայնային սեփականություն համարվող անշարժ գույքի պահպանումը, հաշվառումը, շահագործումը, կազմակերպել դրանց ընթացիկ վերանորոգումը և նախապատրաստել աճուրդային եղանակով վաճառելու համար անհրաժեշտ գործընթացը

➤ **Երկարաժամկետ խնդիրներ**

67. Ելնելով քաղաքի գլխավոր հատակագծի դրույթներից՝ կազմել քաղաքի հատվածների մանրամասն հատակագծման 5 նախագծեր (3 տարի)

➤ **Պատասխանատու**

Քաղաքաշինության բաժնի պետ՝ Կ.Մխոյան

**6.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՍԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

➤ **Երկարաժամկետ խնդիրներ**

68.100%-ով կատարել նախորդ տարիներին կուտակված բոլոր պարտքային պարտավորությունները (1 տարի)  
 69.Ապահովել Քաղաքապետարանի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակը (3 տարի)

**ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ**

ՀՀ	Երկարաժամկետ խնդիրներ	Ծախսեր (հազար դրամ)	Չափորոշիչներ (բալ)					Ընդամենը (բալ)
			Շահարունների թիվ	Երիտասարդացման մետություն	Արբանյակային մետություն	Աշխատատեղերի ստեղծում	Մատչելիություն	
1	Վերանորոգել փողոցների և բակերի՝ 20000 ք.մ. մակերեսը	90000.0	8	0	2	1	10	21
2	Վերանորոգել Ռոսիայի, Անդրանիկի փողոցների և քաղաքի մյուս հատվածների հենապատերի որոշակի հատվածը(400 ք.մ.)	6000.0	6	0	0	1	10	17
3	Ավարտել 3-րդ և 4-րդ միկրոշրջանները վարչական կենտրոնին կապող 600 ք.մ. երկարությամբ աստիճանների կառուցման աշխատանքները	4000.0	8	0	0	1	10	19
4	Բարեկամության հրապարակի հուշարձանների տարածքում կառուցել 400 ք.մ մակերեսով դեկորատիվ ջրավազան	20000.0	5	3	1	1	10	20
5	Ավարտին հասցնել Հատիս փողոցի՝ մինչև ծննդատուն ընկած աջակողմյան 2500 ք.մ. մակերեսով մայթի և գազոնի վերականգնողական աշխատանքները	8000.0	5	0	0	1	10	16
6	Ավարտել 4-րդ միկրոշրջանի մանկական մարզական խաղահրապարակի շինարարական աշխատանքները	5000.0	8	10	8	1	7	34
7	Բարեկարգել Գեղարդի փողոցի թիվ 5 շենքին հարող 8000 ք.մ տարածքը և կառուցել սպորտհրապարակ ու հանգստի գոտի	7500.0	6	6	10	1	10	33
8	Համաձայն թաղամասի բարեկարգման նախագծի՝ ավարտել 4-րդ միկրոշրջանի 0.7 կմ երկարությամբ 5-րդ փողոցի շինարարական աշխատանքները	10000.0	4	0	0	1	10	15
9	Կապիտալ վերանորոգել բնակելի շենքերի 5000 ք.մ հարթ և 5000 ք.մ ասբոթիթեյա տանիքները	25000.0	10	0	10	1	10	31
10	Կապիտալ վերանորոգել , կարգաբերել և գործարկել բնակելի շենքերի 40 վերելակներ	15000.0	10	0	8	1	8	27
11	Ուսումնասիրել 254 բնակելի շենքերի տեխնիկական վիճակը	10000.0	3	0	4	1	10	18
